«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Հայոց առասպելների դերը սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորման գործում
ԱՌԱՐԿԱ	Պատմություն
ՀԵՂԻՆԱԿ	Լազարևա Նաիրա
ՄԱՐԶ	Լոռի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ստեփանավանի թիվ 1 հիմնական դպրոց
ՂԵԿԱՎԱՐ	Մ. գ. դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր՝ Ա. Ծատուրյան

Ստեփանավան 2022 թ.

Բովանդակություն

1.Ներածություն

2. Առասպելների բնութագիրը

3.Հայոց առասպելներ

4.Հայոց վիպերգեր

5.Եզրակացություն

6.Գրականություն

Ներածություն

Յուրաքանչյուր ժողովրդի հայելին նրա ստեղծած արժեքներն են: Հայերն, անկախ բազմաթիվ պատերազմներից ու անցած ճանապարհից, պահպանել են ոչ միայն իրենց ինքնությունը,այլ նաև ավանդույթները, մշակույթը, կրոնը և լեզուն: Եվ դարեր շարունակ կարողացել են փոխանցել այն ամենն ինչ կոչվում է ազգային արժեք:Ազգային արժեքների իրական բնութագիրը տալիս են նաև մեր հայոց առասպելները: Այդ արժեքները կարող են նպաստել նոր սերնդին ազգային ոգով դաստիրակելու գործին, քանի որ հայրենիքի նկատմամբ սերը յուրաքանչյուր հայի համար պետք է լինի առաջնայինը:Այսօր, ավելի քան երբևէ շատ կարևոր է ազգային ինքնագիտակցության, ինքնաճանաչողության հիմնախնդիրների ճիշտ և ժամանակին առաջնայինը դարձնելու գործը՝ սեփական ազգը իր նկարագրից և հոգեկերտվածքից չզրկելու համար: Հետազոտական աշխատանքի նպատակն է տալ հայոց առասպելների բնութագիրը,ինչպես նաև դրանց ուսուցումը դպրոցում ավելի դյուրին դարձնելու հնարների ներկայացումը:

Առասպել, միֆ (հուն.՝ -խոսք, ասք, ավանդություն), ժողովրդական բանահյուսության վիպերգական ժանրերից մեկը, որի մեջ գերբնական ու չափազանցված ձևով արտացոլվել են հնագույն ժողովուրդների կյանքի կարևորագույն դեպքերը, աշխարհի վերաբերյալ մարդկանց պատկերացումներն ու ընկալումները: Առասպելների հիմքում, հիմնականում, ընկած են եղել տվյալ ցեղի, ժողովրդի կյանքում տեղի ունեցած իրական դեպքերը, սակայն բնության դեմ դեռևս անզոր մարդն իր սնոտիապաշտ մտածողությամբ երևույթները բացատրել է որպես աստվածների և ոգիների գերբնական ուժի արտահայտություն: Այդ պատճառով էլ իրական հիմք ունեցող դեպքերի ու հերոսների պատմությունն ի սկզբանե ընդունել է չափազանցված և գերբնական բնույթ: Չնայած դրան, առասպելներն օգնում են որոշակի պատկերացում կազմելու հնագույն ժողովուրդների հատկապես նախագրային շրջանի պատմության վերաբերյալ: Աշխարհում մեծ ճանաչում ունեն Անթեյի, Պրոմեթևսի, Հերկուլեսի, Իկարի մասին և այլ հին հունական առասպելներ, որոնց մեջ բանաստեղծորեն արտահայտվում են հին հույների աշխարհըմբռնումն ու գեղարվեստական մտածողությունը: Մովսես Խորենացու «Հայոց պատմության» շնորհիվ պահպանվել և մեզ են հասել հայ ժողովրդի ստեղծած՝ «Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Վահագնի ծնունդը», «Տորք Անգեղ» առասպելները: Առասպելներից շատերը հետագայում ենթարկվել են գրական մշակման

(օրինակ՝ Էսքիլեսի «Շղթայված Պրոմեթևսը», Սոֆոկլեսի «Էդիպ արքան» հունական գրականության մեջ, Ն. Զարյանի «Արա Գեղեցիկը», Ղ. Աղայանի «Տորք Անգեղը», Հովհ. Հովհաննիսյանի «Վահագնի Ծնունդը», «Արտավազդը» հայ գրականության մեջ և այլն):

Ⅴ դարի հայ պատմիչները՝ մասնավորապես Մովսես Խորենացին ու Ագաթանգեղոսը հանդիսանում են այն կապող օղակը, որի միջոցով այսօր մենք կարողանում ենք շատ թե քիչ առնչվել նախաքրիստոնեական հավատքին, դիցարանին և հատկապես առասպելներին և ավանդազրույցներին:Քրիստոնեության ընդունումը, որը նոր աշխարհայացքի և արժեհամակարգի ընդունում էր, իր կերպով ժխտումն ու բացառումն էր այն հին արժեքների, որին դարեր շարունակ սովոր են եղել հայերը: Փաստորեն նոր գաղափարախոսության որդեգրումը ազգի հոգեկերտվածքի մեջ փոփոխություններ առաջ բերեց: Սակայն, ինչպես վկայում է փաստացի պատմությունը, դեռևս Ⅴ դարում մնացել ու պահպանվել էին հեթանոսական հավատքի մնացուկներ, որոնց համահավաքման և պահպանման մեջ երախտավոր կարելի է համարել վերոնշյալ պատմիչիչներին: Հայ առաջին հեղինակներն էլ լինելով քրիստոնյա կրոնավորներ՝ հեթանոսական կրոնի ու պաշտամունքի թունդ հակառակորդներ, բնականաբար, պետք է զանց առնեին դեռ իրենց օրերում ժողովրդի լայն խավերում գոյատևող հին աստվածների մասին եղած երգերի ու առասպելների հետքերը: Եվ եթե որոշ բանաստեղծներ էլ արձանագրել են ու հաղորդել, ապա բոլորովին կողմնակի հանգամանքների բերումով, հաճախ հին հավատալիքներն ու առասպելները քննադատելու կամ մերժելու առնչությամբ:

Այսպես, Խորենացին միակ պատմիչն էր, ով անդրադարձավ հայ ժողովրդի վաղնջական անցյալին, սկսեց Հայկի և Բելի կռվից և պատմությունը հասցրեց մինչ իր ապրած ժամանակները: Անդրադառնալով հայ ժողովրդական բանահյուսությանը՝ Խորենացին մեծ պատասխանատվությամբ է վերաբերվում դրան՝ որոշակի սահմաններ դնելով առասպելների և պատմական զրույցների միջև:

Պատմահայրը առասպելներն անվանում է նաև ՝հնացած՝ կամ ՝առասպելական՝ զրույցներ: Առասպելների հետ միասին Մովսես Խորենացին օգտագործել է նաև լիրիկական ժանրի բազմաթիվ ստեղծագործություններ, որոնք, թեև ինչ-որ չափով ունեն դիցաբանական հիմք, սակայն դրանց պատմահայրը առասպել չի կոչում: Նման օրինակներ են «Հայկ և Բելը»,«Հայկյան Արամ», «Արտաշես և Արտավազ»,«՝Տիգրան և Աժդահակ՝» վիպերգերը, որոնցից մի քանիսը, թերևս, կարելի է

դասել առասպելների շարքը: Բանն այն է, որ դրանք, ունենալով դիցաբանական հիմք, տեղ-տեղ չափազանցված սյուժեով պատմություններ են՝ նման «Արա Գեղեցիկ և Շամիրամ՝» առասպելին: Սակայն վերջինս ներկայանում է որպես առասպել, բայց և ունի պատմական հիմք:Մովսես Խորենացին առասպելներ է համարում այն ստեղծագործությունները, որոնց սյուժեն ամբողջապես դիցաբանական-առասպելական է: Հաշվի առնելով այդ և մի շարք այլ սահմանումներ, որպես առասպել կարելի է առանձնացնել.

ա) Հայկ և Բել

բ) Հայկյան Արամ

գ) Արա Գեղեցիկ և Շամիրամ

դ) Տորք Անգեղ

ե) Տիգրան և Աժդահակ

զ) Վահագնի ծնունդ

է) Երվանդի դժնյա հայացքի մասին զրույցը

ը) Արտաշես և Արտավազդ

Սակայն, եթե հաշվի առնենք, որ առասպելները զրույցներ են դիցաբանական անձանց՝ հերոսների և աստվածների մասին, ապա անհրաժեշտ է լինում առասպելների ուսումնասիրման շրջանակում ներգրավել նաև «Հայկ և Բել» առասպելը, որը, լինելով հերոսական անցյալի դրվագ, պատմում է հայոց էպոնիմ և հետագայում նաև աստվածացված Հայկի մասին: Սխալ չի լինի որպես առասպել դիտարկել նաև «Արտաշես և Արտավազդ» և «Տիգրան և Աժդահակ» վիպերգերը, որտեղ առաջինի ավարտը՝ Արտավազդի շղթայվելը, իր մեջ կրում է միանգամայն առասպելական բնույթ:Իսկ «Տիգրան և Աժդահակ» վիպերգի մասին խոսելիս ակ. Մ. Աբեղյանը գտնում էր.՝Տիգրանի վեպը բուն պատմական հիշողությունների հետ ունի նաև առասպելական, հատկապես ամպրոպի, վիշապի առասպելի բնավորություն: Պատմածքի մեջ երկվություն կա. գործող անձերը հանդես են գալիս և՛ իբրև մարդ, և՛ իբրև վիշապ՝: Պատմահայրը մեծ ոգևորությամբ է ներկայացնում հատկապես Հայկի, Հայկյան Արամի և Տիգրանի մասին զրույցները, առանձնացնելով նրանց որպես մեծագործ քաջեր. «Ուստի ես սիրում եմ ըստ քաջության այսպես կոչել՝ Հայկ, Արամ, Տիգրան, որովհետև քաջերի սերունդներն քաջեր են...»

Գրեթե բոլոր առասպելներում կա օտարի հետ հակամարտության տեսարան: Վիպական-գաղափարական այս գիծն այնուհետև անցնում է բոլոր հայ հին և նոր ժողովրդական վեպերին, խարսխվում հայ ժողովրդի պատմական երկարատև կենսափորձի վրա, դառնում խորհրդանշային հայրենասիրական գաղափարախոսություն, այն է՝ կենաց ու մահու պայքար արտաքին ու ներքին բոլոր թշնամիների դեմ, հանուն սեփական հայրենիքի, պետականության, ժողովրդի ազատության և անկախության:

«Հայկ և Բել»առասպելը – Հայկի և Բելի կռվի պատմությունը ժամանակային առումով ամենահին առասպելն է՝ խմբագրված Խորենացու և Սեբեոս եպիսկոպոսի կողմից: Սույն առասպելը մեծապես կապված է հայ ժողովրդի ինքնության ձևավորման հետ:Ավանդական բանահյուսությունը, երբ մի անգամ հաստատուն բյուրեղացած կերպարանք է ստանում, երկար դարեր այլևս չի մեռնում, մանավանդ, երբ կապվում է մի տեղի անվան հետ, ինչպես եղել է Հայկի ու Բելի առասպելի վերաբերմամբ՝:

Ըստ պատմահոր՝ առասպելի սյուժեն հետևյալն է. Հայկի և Բելի սերունդը հղացավ աշտարակաշինության մեղսալի գործը, որը և ձեռնարկեց իրագործելու: Աստված կործանում է այդ աշտարակը և մարդկանցից յուրաքանչյուրին տալիս է մյուսին անհասկանալի լեզու: Հսկաների մեջ սկսվում են գոյության, միմյանց տիրանալու կռիվներ: Տիտանյան Բելը փորձում է հպատակեցնել իրեն բոլոր հսկաներին: Սակայն, Հայկը, որ ազատատենչն էր հսկաների մեջ, չկամեցավ հնազանդվել ասորական հսկային և իր տոհմով հեռացավ Բաբելոնից, եկավ Հյուսիսային կողմերը գտնվող Արարադի երկիրը: Բելը պատգամավոր է ուղարկում հնազանդվելու առաջարկով, ասելով՝ ‘մեղմացրո՛ւ քո հպարտ բնավորության ցուրտ սառնությունը և ինձ հնազանդվելով խաղաղ ապրիր՝ որտեղ որ հաճես իմ երկրում բնակության տեղ ընտրել՝: Հայկը մերժում է Բելի առաջարկը, որից հետո Տիտանյան հսկան արշավում է Հայկի երկիր՝ բռնի ուժով նրան և նրա գերդաստանը հնազանդեցնելու: Բավականին հետաքրքիր և խորիմաստ է այն կոչը, որով Հայկը կռվից առաջ դիմում է իր զորքին Հայկն ասում է.‘Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, աշխատենք այն տեղին պահել, որտեղ կանգնած կլինի Բելը քաջերի բազմության մեջ, որպեսզի կամ մեռնենք և մեր աղխը Բելի ծառայության տակ ընկնի, կամ մեր մատների հաջողությունը նրա վրա ցույց տանք, նրա ամբոխը ցրվի և մենք հաղթություն տանենք»: Մարտական դիրքը նկարագրելիս Խորենացին ցայտուն կերպով բնութագրել է Հայկի բնավորության գծերը: Բելը մեծ ամբոխով ու զորականներով

շրջապատված հանդարտ կանգնած էր բլրակի վրա՝ իբրև դիտանոցում, մինդեռ Հայկը համարձակ է և քաջասիրտ, նա անվախ ելնում է Բելի դեմ և լայնալիճ աղեղով նետահարում նրան: Ապա Բելի դիակը դեղերով զմռսում է, հրամայում է տանել Հայք և թաղել մի բարձրավանդակ տեղում: Իսկ այս երկիրը իր անունով կոչում է Հայք: Այս գեղեցիկ առասպելը Գր. Գրիգորյանն անվանել է «հայ էթնոսի ձևավորման պրոցեսի արտացոլումը»: Խորենացին Հայկին նկարագրում է բավականին վայլեչակազմ, ուշիմ ու խոհեմ, ազատատենչ, անվախ, գեղագանգուր ու զվարթաչյա, թիկնավետ, վառվռուն աչքերով: Նման հոգեկերտվածք ու արտաքին նկարագիր ունեցողը, անշուշտ, սովորական հերոս չէր, այլ հայ էթնոսի կազմավորման գործընթացն արտացոլող գեղարվեստական կերպար: Աբեղյանը առաջ է քաշում այն միտքը, որ թեև այն բանի, որ Խորենացու ձեռքով գրական մշակություն է կրել տվյալ առասպելը, բայց և այնպես դրա մեջ դեռ երևում է նաև նախնիների պաշտամունքի հետքը և այն, որ հայ ցեղին առաջնորդող նահապետերից մեկը պիտի դառնար հայ ազգի նախնին: Գր. Գրիգորյանը ենթադրում է, որ Հայկը առասպելացվել է հայ էթնոսի կազմավորման պատմական միսիան իրագործելու հիման վրա, այդ սխրագործության մասին հորինված վիպերգի (այս դեպքում առասպելի) վերջնական կազմավորումից հետո: Հայկն իր անհնազանդությամբ և ազատատենչությամբ դրսևորվում է իբրև իր ժամանակի առաջավոր գաղափարների ու հատկանիշների կրող, որը ժողովուրդն ընդունել է որպես հերոսին հատուկ գիծ: Բայց միևնույն ժամանակ նրանում ժողովուրդը մարմնավորել է իր աշխարհընկալումը, իդեալները, էության ու խառնվածքը ընդհանրացնող գծերը: «Հայկ և Բել» առասպելում առնչվում ենք արտաքին ուժերի հակամարտության հետ, որը «մենք» և «նրանք» կամ էլ «յուրային» և «օտար» կողմնորոշումների հիմք է հանդիսանում: Նախորդ գլխում, այդ թեմային անդրադառնալիս, նշվեց, որ «մենք» և «նրանք»-ի կերպարն այն կարևոր հարացույցն է, որի հիմքում ձևավորվում է ազգային ինքնությունը, այսինքն՝ օտարի հետ հարաբերվելիս և համեմատվելիս: Այսպիսով, Հայկին համարելով հայ ժողովրդի անվանադիր նախնի, նրա կերպարի մեջ, ինչպես նշվեց, ժողովուրդը խտացրել է իր իդեալները, բնավորության գծերը: Դրանից ելնելով՝ տվյալ ժամանակներում հայ ժողովրդին կարելի է վերագրել ազատատենչություն, պատվասիրութուն, արդարամտութուն, հայրենասիրություն և այլ հատկություններ: Սրանք «մենք»-ի կերպարի լավագույն դրսևորումներն են, որին հակառակ «նրանք»-ի կերպարում խտանում են թշնամուն

հատուկ հատկություններ՝ սնապարծություն, վախկոտություն, ամբարտավանություն, հակառակ նրա արտաքին զորեղության՝ ներքին նենգամտություն և այլն:

Սկիզբ դնելով հայկական առասպելներում դրսևորված հայ ազգին բնորոշ դրական ու հաստատուն հատկություններին՝ Հայկի և Բելի առասպելը ստեղծում է հայ ազգային ինքնության նախնական մոդելը, որն էլ զարգանալով մնայուն է մնում դարեր շարունակ: Հայկյան Արամի մասին առասպելը: Արամի մասին Մովսես Խորենացին գրում է, որ նա շատ քաջագործություններ է արել, հաղթանակներ տարել: Խորենացին նշում է, որ այս Արամի անունով է, որ օտարները մեզ ՝արմեն՝ են կոչում: Փաստացի Հայկի նման Արամին ևս կարելի է համարել անվանադիր նախնի՝ էթնոնիմ: Պատմահոր նկարագրությամբ Արամն աչքի էր ընկնում հայրենասիրությամբ, ազգասիրությամբ,«՝լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես են օտարացեղ ազգերը ոտնակոխ անում իր հայրենիքի սահմանները և օտարները տիրում են իր արյունակից հարազատների վրա»:

Մեզ հասած բոլոր առասպելներից Հայկյան Արամի մասին առասպելը ամենածավալունն է: Այստեղ պատմվում է այն մասին, թե ինչպես Հայկի սերունդներից Արամը, որը Բիայնայի թագավորն էր, կռիվներ է մղում ժամանակի հզոր թշնամիների՝ մեդացի Նյուքար Մադեսի, ասորի Բարշամի և Տիտանյան Պայապիս Քաղյանի դեմ, հաղթում նրանց: Այս երեք դրվագները ներքին տրամաբանական իմաստով կապված են իրար և իրենց գաղափարի բովանդակությամբ նկարագրում են հայ ժողովրդի կազմավորման ևս մի փուլ, ձևավորում ազգի առաջնորդի կերպար: Իր այդ կերպարում Արամը ձգտում է ոչ միայն հայրենիքի սահմանները պահպանել, այլ նաև այն ընդարձակել: Նա՝ որպես իսկական հայրենասեր, գիտակցում էր, թե ազգի գոյության և ամուր պետության համար որքան կարևոր է լեզուն, ուստի գրավյալ տարածքներբնակիչներին հրամայում է սովորել հայերեն: Բավականին զարմանալի է այն դաժան վերաբերմունքը, որ նա ցուցաբերում է թշնամիների նկատմամբ: Այսօրվա տեսանկյունից նայելիս, հնարավոր է, այդ ամենը բարբարոսություն կամ վայրագություն անվանել, սակայն, հաշվի առնելով Արամի ժամանակների արժեհամակարգը, նրա՝ ուժեղի մտածողությունը, այդ ամենը փոխում է իր երանգը և դառնում հայրենասերի, հերոսի հատկություն: Ինչպես նախորդ՝ Հայկի և Բելի առասպելում, այնպես էլ այստեղ, բավականին ցայտուն է արտահայտված ՝մենք՝ և ՝նրանք՝ հարաբերությունը: Սա բնորոշ է էթնոսի ձևավորման շրջանին: Հատկապես թշնամու հետ հակամարտությունների ժամանակ

ազգային գիտակցության ձևավորումն ու զարգացումը ևս մի փուլ է անցնում, նամանավանդ, երբ այդ պայքարը տեղի է ունենում գոյության համար: Տվյալ առասպելում ազգային ինքնության, ինքնագիտակցության բաղադրիչները բավականին շատ ու ակնառու են: Ազգային ինքնության ցանկացած սահմանման մեջ նշվում է, որ ազգի անունը այն կարևորագույն տարրերից մեկն է, որի հիման վրա տվյալ ազգը առանձնանում է մյուսներից: Պատմահայրն ինքն է մատնանշում, որ Արամի անունով մեր ազգին օտարներն անվանում են ՝արմեն՝: Եթե Հայկի անվամբ մենք ենք օտարներից մեզ առանձնացնում, ապա Արամի անվամբ տեղի է ունենում հակառակը՝ օտարներն են մեզ առանձնացնում իրենցից, ճանաչում որպես առանձին ազգ: Սա ՝մենք՝ և ՝նրանք՝ հարաբերության առաջին կարևոր դրսևորումն է այս առասպելում: Մյուս կարևոր բաղադրիչը հակամարտության ժամանակ ձևավորված ազգն է, համախմբված ու համախոհ: Խորենացին հիշատակում է, որ Արամը հավաքում է հարազատ, քաջ ու աղեղնավոր մարդկանց մի բազմություն՝ մոտ հինգ բյուր մարդ, վարժ նիզակավոր շատ ուժեղ երիտասարդներ, հաջողակ ձեռքերով, սրտոտ ու հմուտ պատերազմող: Այստեղ խոսվում է ազգի միասնական ուժի, էթնոսի հասունության, համընդհանուր գաղափարի, ազգային գիտակցական շահի մասին՝ որպես փրկության ու հաղթանակի գրավականի: Այս և նման այլ դրվագներում ներկայացված Արամի կերպարը հանդես է գալիս որպես ազգային իդեալ և դառնում Խորենացու սիրելի հայերից մեկը:«Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելը- Այս առասպելը բացառիկ տեղ է գրավում մեր բանահյուսության մեջ և առանձնանում է իր հետաքրքիր սյուժեով և դիցաբանական մոտիվներով: Արան Հայկի սերունդներից է, Հայկյան Արամի որդին և առասպելում հանդես է գալիս թե՛ որպես պատմական անձ, թե՛ որպես աստված: Մովսես Խորենացին Արայի աստված լինելու մասին գրեթե չի հիշատակում, նա բավարարվում է եղելության նկարագրությամբ և ինքն էլ գրում, որ «Արայի մասին կարճառոտ այսքանն էլ բավական է հիշատակել»: Սակայն հետագայում կատարված հետազոտությունները և գարնան զարթոնքի ուժերի վերաբերյալ նախնյաց պաշտամունքի ուսումնասիրությունները օգնում են ամբողջացնել այս գեղեցիկ զրույցը դիցաբանական տարրերով՝ նրան տալով միանգամայն առասպելի տեսք: Այստեղ պատմվում է, թե ինչպես Ասորեստանի թագուհի Շամիրամը, լսելով Արայի գեղեցկության մասին, նրա մոտ պատվիրակներ է ուղարկում՝ առաջարկելով գալ Նինվե, ամուսնանալ իր հետ և թագավորել երկրին, կամ էլ պարզապես կատարել իր ցանկություններն ու վերադառնալ իր երկիր: Սակայն հայոց արքան

մերժում է թագուհու բոլոր առաջարկությունները, ինչն էլ դառնում է պատերազմելու առիթ: Շամիրամը զորքով գալիս է Հայաստան կռվի: Ու թեև նա իր զորականներին հրամայել էր Արային ողջ վերցնել, Արան մարտի դաշտում սպանվում է: Շամիրամը փնտրել է տալիս Արայի դիակը մահացածների մեջ, դնում ապարանքի վերնատանը: Թագուհին հույս ուներ կախարդական դյութանքով և արալեզների (շնակերպ արարածներ) միջոցով կենդանացնել Արային, բայց երբ դիակը նեխում է, հրամայում է այն գցել մեծ վիհի մեջ և իր սիրեկաններից մեկին հագցնում է Արայի նման և հայտարարում, թե Արան վերակենդանացել է: Ահա այս փոքրիկ, բայց բովանդակալից առասպելի մեջ բավականաչափ հետաքրքրող հատվածներ կան, որոնք կապված են ժողովրդի հավատալիքների, կենցաղի և այլնի հետ: Ինչպես երևում է առասպելից, ժողովուրդն իրոք հավատացել է, որ Արան վերակենդանացել է: Ամենայն հավանականությամբ Արան աստվածացվել է հենց այս դեպքից հետո՝ իր «աստվածային» հատկության շնորհիվ, քանզի միայն աստվածներին է բնորոշ անմահությունը: Թեև եթե առասպելը դիտարկենք զուտ պատմական տեսանկյունից, Արայի անմահ լինելը կրկին կարդարացվի՝ որպես հերոսական հատկություն: Իսկ ինչո՞ւմն է կայանում նրա հերոսությունը, չէ՞ որ նա ընկավ մարտի դաշտում: Անշուշտ այստեղ հերոսական արարքը համարվում է հայրենասիրությունը, ընտանեկան հավատարմությունը, ազնվությունը: Այս արարքով նա օրինակ է ծառայում իր ողջ ժողովրդին: Ա.Նալչաջյանն իր «Էթնիկ հոգեբանություն՝» գրքում առաջ է քաշում այն միտքը, որ «Ընտանիքի ավանդական արժեքների պահպանումը նույնպես էթնիկ գլոբալ ինքնապաշտպանության միջոց է»: Ահա դրան հակառակ ակներև է Շամիրամի՝ տիրապետության ձգտող բռնակալներին հատուկ անբարոյականությունը, անհավատարմությունն իր ընտանիքին՝ ինչպես ամուսնուն, այնպես էլ որդիներին: Զգալի է ընտանիք գաղափարի տարբերություններն այս երկու ազգային կերպարներում: Արան ընտանիքի հայր է, նա նվիրված է իր կնոջը՝ Նվարդին, որի հետ ունեն մի տղա՝ Անուշավանը: Տղային նվիրել էին Արամանյակի՝Արմավիրում տնկած քրմական սոսիներին, ուստի կոչում էին նրան Անուշավան Սոսանվեր: Իսկ ահա Շամիրամը բացահայտ նվիրված չէ ամուսնուն, տարբեր կապեր է ունեցել այլ տղամարդկանց հետ, խայտառակում է իր ընտանիքի պատիվը, ինչի համար նրա որդիները կշտամբում են նրան, իսկ ինքը սպանել է տալիս վերջիններիս: Ահա այս հակասությունն ավելի է սրում հայի բնավորության դրական գծերը: Առասպելում առկա են նաև պաշտամունքային մի շարք դրվագներ, որոնք հատկանշական են եղել հեթանոսական շրջանին: Նախնական պանթեոնում

Արա Գեղեցիկը պաշտվել է որպես գարնան զարթոնքի աստվածություն, որ աշնանը մահանում էր, իսկ գարնանը հարություն առնում: Արայի պաշտամունքը լայնորեն կապված է եղել բնության հետ՝ բուսականության, ջրի և այլնի հետ: Այդ մասին են վկայում Արայի պատմության մեջ առկա բազմաթիվ բուսականություն խորհրդանշող անվանումները՝ Նվարդ, Անուշավան, Սոսանվեր և այն, որ սկզբնական շրջանում Արայի քանդակներ են համարվել քարակոթող վիշապները, որոնք դրվում էին ջրերի մոտակայքում:

Անգեղյա Տորքի մասին առասպելը – Այս առասպելն իր սյուժեով բավականաչափ տարբերվում է մյուս առասպելներից, բայց ետ չի մնում իր գեղեցկությամբ: Մովսես Խորենացու համար Տորքի մասին զրույցը առասպելնաց առասպելն է : Ինչպես վկայում է Խորենացին, Տորքը Հայկի սերունդներից էր, տգեղ, բարձրահասակ, կոպիտ կազմվածքով տղամարդ էր, փոս ընկած աչքեր ուներ, դժնի հայացք, ինչի համար էլ նրան կոչում էին Անգեղյա, ասել է թե՝ տգեղ: Մովսես Խորենացին ներկայացնում է նրա պատմական նախատիպը. Տորքը Վաղարշակի կողմից նշանակած էր արևմուտքի կուսակալ, իսկ իր Անգեղ մականվան պատճառով, իր տունը (տոհմը) կոչվում է Անգեղյա: Սակայն պատմահայրը զերծ չի մնացել նաև պատմական այս փաստի առասպելական մեկնաբանությունը նկարագրելուց: Նա պատմում է, թե սարքում, որոնց վրա եղունգներով պատկերներ էր անում: Խորենացին պատմում է նաև թե ինչպես է Տորքը հարձակվել թշնամական նավերի ինչպես էր Տորքը որձաքար ապառաժներն ուզածի պես ճեղքում, եղունգներով տաշում, տախտավրա, բլրաձև ժայռեր շպրտել նրանց ետևից, ծովն ալեկոծվել է, իսկ նավերը՝ խորտակվել: Մովսես Խորենացին առասպելի նկարագրության մեջ գրում է, որ այս «...նրա (Տորքի) ուժեղության և սրտոտ լինելու պատճառով երգերը պատմում էին չափազանց անհարմար բաներ, որոնք ո՛չ Սամսոնին են հարմարվում ոչ Հերակլեսին և ոչ էլ Սագճիկին (պարսկական հերոս)»: Փաստացի այդ ժամանակներում ընդունված է եղել ժողովրդի հերոսներին, աստվածներին, նրանց մասին ստեղծված պատմությունները համեմատել պարսկական և հունական համանման զրույց-առասպելների հետ: Սակայն Խորենացին զերծ է պահում այս առասպելը համեմատվելուց, ավելին՝ հերոսի ուժը այլոց ուժերին հավասարեցնելուց՝ գերապատվությունը տալով հայկականին: Պատմահայրը զարմանալի վերաբերմունքով է ներկայացնում Տորքի արտաքինը՝ շեշտը դնելով այն համեմատության վրա, որ Հայկի սերունդները աչքի են ընկել իրենց վայելչակազմությամբ, բայց այս մեկը, թեև տարբերվել է նրանցից, տգեղ է եղել, բայց ավելի ուժեղ է եղել մյուսներից: Անշուշտ

ժողովուրդը առասպելներ է հյուսել իր այն հերոսների մասին, որոնք եղել են սիրելի և աչքի են ընկել որևէ սխրանքով: Տորքը, չնայած իր տեսքին, եղել է սիրելի հերոս, քանի որ աստվածացվել է որպես քաջության, ուժի աստված, բացի այդ նա իր ուժն օգտագործել է բարություն տարածելու համար, փրկել իր ժողովրդին թշնամիներից: Այս առասպելում հանդիպում ենք մի հետաքրքիր փաստի: Մովսես Խորենացին վկայում է, թե ինչպես է Տորքը քարե տախտակների վրա արծիվներ ու տարբեր պատկերներ արել եղունգներով: Ահա սա վկայում է, որ պատմահոր ներկայացրած ժամանակներում արդեն որոշակի մակարդակի է հասած եղել փորագրության արվեստը: Բավականին շատ ուսումնասիրություններ ընթացել և շարունակվում են ընթանալ թե՛ Տորքի անվան ու նրա պաշտամունքի, թե՛ Անգեղ անվան վերաբերյալ՝ այն հասցնելով դեպի վաղ անցյալ, որոնք, թերևս, դուրս են մնում տվյալ նյութի շրջանակներից:

«Տիգրան և Աժդահակ»- Պատմահայրը թեև այս զրույցը չի դասում առասպելների շարքին, բայցԱբեղյանը և այլ գրականագետներ, հիմք ընդունելով Աժդահակի սերունդների մասին Խորենացու առաջ քաշած առասպելական փաստը, այս զրույցին վերագրում են առասպելական բնույթ:

Սույն ենթագլխում խոսվեց այն մասին, որ Տիգրանը Հայկի և Արամի հետ համարվում է պատմահոր սիրելի հերոսը: Առասպել-զրույցի մեջ դա բավականին ցայտուն է դրսևորված: Խորենացին մեծ ոգևորությամբ գովաբանում է Տիգրանի վայելչակազմությունը, հիացմունքով պատմում, որ արքան սակավապետ ու չափավոր էր իր մարմնի ցանկությունների և օրինավոր՝ ուրախությունների մեջ, խոհեմ ու պարկեշտ, պերճախոս մարդ էր: «Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց...»:

Սակայն, առասպելի բուն բովանդակությունը կայանում է հակամարտության բուռն պայքարի մեջ: Այսպես, Տիգրանը, որը մեր բնիկ թագավորն էր, հզորացրել էր Հայաստանը, ընդարձակել տարածքը, «բազմաբյուր» զորք ուներ և հարկատու էր դարձրել գրավյալ շատ ժողովուրդների: Մարաց թագավորը՝ Աժդահակը, վախենալով Տիգրանի աշխարհակալ տերությունից ու նրանից երբևէ վրա հասնող վտանգից, դաշնակցում է նրա հետ, խորամանկ միջոցներով Տիգրանի քրոջը՝ Տիգրանուհուն կնության առնում: Աժդահակը Տիգրանի դեմ դավեր նյութելու համար սիրաշահում է իր կնոջը, փորձում է բթացնել վերջինիս զգոնությունը և տրամադրել եղբոր դեմ: Սակայն հայուհին իսկույն կռահում է ամուսնու նենգ միտքը և մտերիմների

միջոցով եղբորն իմաց է տալիս գալիք վտանգի մասին: Տիգրանը զորք է հավաքում և պատերազմով դուրս է գալիս Աժդահակի դեմ: Հայոց արքան սպանում է մարաց թագավորին, նրա ընտանիքը բազմաթիվ գերիներով բերում, բնակեցնում է Մասիսից դեպի արևելք, Երասխ գետի երկու կողմերում մինչև Գողթնի սահմանները: Խորենացին նաև ավելացնում է. Այս բանը ճշմարտապես պատմում են և թվելյաց երգերը, որ ինչպես լսում եմ, ախորժելով պահել են գինեվետ Գողթն գավառի կողմի մարդիկ, այդ երգերում չափածո շարադրվում են պատմություններ Արտաշեսի և նրա որդիների մասին, այլաբանաբար հիշելով և Աժդահակի սերունդներին վիշապազուններ կոչելով: Որովհետև Աժդահակ մեր լեզվով նշանակում է վիշապ:

Խորենացին առասպել-վիպերգը շարադրելիս գրեթե չի օգտագործում հայ, հայկական կամ Մեծ Հայք անվանումները: Դրանք փոխարինում է՝մեր՝ դերանունով, որի շնորհիվ տարբերակում է հայ ժողովրդին մյուսներից, տարածքային հենքով առանձնացնում այն: Վիպերգում միայն մի տեղ ենք հանդիպում տարածքի անվանմանը, այն էլ Աժդահակի կողմից, որն ասում է իբր երազում մի անծանոթ երկրում էր գտնվում, մի լեռան մոտ, որ գետնից բարձրացած էր և որի գագաթը թվում էր սաստիկ սառույցներով պատած, և կարծես թե այն Հայկազանց երկրում էր: Բնության այս փոքիկ նկարագրությունից պարզ է դառնում, թե ինչ տպավորություն է թողնում Հայքը օտարների մոտ և այն, որ այդ տարածքը մշտական տեր ունի՝ Հայկազունների երկիրն է: Եվ այստեղ Տիգրանը՝ որպես իսկական հայկազուն, Աժդահակի հետ կռվի ժամանակ վարվում է հենց իր նախահոր՝ Հայկի օրինակով, այն է՝ իր թշնամին իր ձեռքով պիտի մեռնի: Այս գեղեցիկ պատմության մեջ ակնհայտ են հայկական ընտանեկան հարաբերությունների դրսևորումներ, որոնք մեր ինքնության բաղկացուցիչ մասն են կազմում: Առաջին պլան է մղվում եղբայրասիրությունը: Տիգրանուհին մինչ այս մեզ հանդիպած առասպելներում հանդես եկող ամենաերևելի հայուհու կերպարն է: Մինչ այս հանդիպել էինք նաև Արա Գեղեցիկի կնոջը՝ Նվարդին, բայց նապատմականորեն պասիվ կերպար է: Իսկ ահա Տիգրանուհին մարմնավորում է հայ կնոջ այնպիսի հատկություններ, ինչպիսիք են ուշիմությունը, խոհեմությունը, զգոնությունը, պատվախնդրությունը, հայրենասիրությունը, այդ ամենին ավելացրած Աժդահակի խոսքերը նրա մասին՝ գեղեցկագույնը ու խոհեմը կանանց մեջ: Վիպերգի մեկ այլ մշակման մեջ ակտիվ է դառնում նաև Զարուհու՝ Տիգրանի կնոջ կերպարը, որն իր ամուսնու հետ հավասար կռվում էր մարտի դաշտում: Մեզ հասած գրեթե բոլոր առասպելներում և վիպերգերում ներկայացված հայ կանանց կերպարներն օժտված են այս

հատկություններով, ազնիվ են պարկեշտ՝ ի տարբերություն ասորական Շամիրամի և այլ ազգերի կանանց: Նույն երևույթին հանդիպում ենք նաև՝Սասնա ծռեր՝ էպոսում, որտեղ կերտված են ուժեղ հայ կանանց կերպարներ, որոնց պարկեշտությունն ավելի ընդգծվում է օտար կանանց (Սառյեի, Իսմիլ խաթունի) անբարոյականության համեմատ: Պատմահոր ոգևորությունը Տիգրանին նկարագրելիս, տեղ-տեղ անգամ չափազանցության հասնելով, չի զրկում հայոց արքայի կերպարի մեջ հային բնորոշ գծեր գտնելուց: Գովաբանելով Տիգրանին, նրա գթասրտությունը, որը դրսևորվեց թշնամու ընտանիքին ապաստան տալով, իր ընտանիքին ու հայրենիքին նվիրվածությունը, Մովսես Խորենացին մեկ այլ հարթության վրա է դնում Աժդահակի նենգամտությունը, վախկոտությունը, որ անգամ իր երազից է վախենում: Նա Աժդահակին դարձնում էչարի մարմնավորում և հակադրում Տիգրանին՝ մեր թագավորներից ամենահզորին և ամենախոհեմին և նրանցից բոլորից քաջին: Սա հարազատ ժողովրդին բարձրացնելու, նրա դրական հատկանիշներն ընդգծելու մի հնարք է, որը Խորենացու մոտ շատ կարելի է հանդիպել: Բնության չար ու բարի ուժերի հին առասպելական կռիվը հայոց հին առասպելներում վերածվել է յուրային հերոսի կամ թագավորի սեփական տոհմն ու հայրենիքը օտար բռնակալներից պաշտպանելու, իր տոհմի, ցեղի, իշխանության պատմական իրավազորությունը հաստատող մի արդարացի կռվի՝ յուրայինի պարտադիր հաղթանակով: Վահանգնի մասին առասպելը - Խորենացին վկայում է, որ Տիգրանն ունեցավ երեք որդի՝ Բար (կամ Բաբ), Տիրան և Վահագն: Առաջին երկուսի մասին նա ոչինչ չի պատմում: Ամենայն հավանականությամբ Տիրանին այդպես են կոչել Տիր աստծո անունով, իսկ ահա Վահագնի մասին Խորենացին մեզ է հասցրել բանահյուսական մի գեղեցիկ մնացուկ, որն այսօր հայոց հեթանոսական անցյալի վկան է հանդիսանում:

Երկնէր երկին, երկնէր երկիր,Երկնէր և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ.
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր.
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ,
Նա հուր հեր ունէր,
(Ապա թէ) բոց ունէր մօրուս,
Եւ աչկունքն էին արեգակունք:

Զարմանալի կապ կա այս երկու առասպելների՝ ավելի կոնկրետ Տիգրանի և Վահագնի միջև: Խորենացին, երբ նկարագրում է Տիգրանի քաջագործությունները, գրում է.«՝... Այս և այսպիսի ուրիշ շատ բաներ բերեց մեր երկրին այս խարտյաշ և մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը...՝» , իսկ ապա մեզ ներկայացնելով Վահագնի մասին այն բանահյուսական փշրանքը, նույնպես անդրադառնում է «խարտեաշ պատանեկիկ»-ին հուր մազերով և «բոց մօրուս»-ով:

Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ, առհասարակ, բավականին շատ են հայոց հեթանոսական աստվածների գործառույթների, նրանց պաշտամունքների մասին փաստող Արտաշես և Արտավազդ – Արտաշեսի և Արտավազդի մասին առասպելի առաջին մասը նկարագրում է Արտաշեսյան արքայատոհմի հիմնադրումը, ունի պատմական հիմք և հանդիսանում է Երվանդի մասին վեպի տրամաբանական շարունակությունը: Սակայն պատմական այս իրադարձությունը մեզ հետաքրքրում է հատկապես Արտավազդի մասնակցությամբ դրվագով: Արտաշես արքան, որ շենացրել ու հզորացրել էր երկիրը և իր քաջագործությունների և բարեգործությունների համար ստացել էր՝բարեպաշտ՝ անունը, դարձել էր ժողովրդի սիրելի թագավորը: Իսկ վեպի երկրորդ մասը, որն արդեն ներկայանում է առասպելի տեսքով, կապված է Արտաշեսի որդու՝ Արտավազդի հետ, որ իբր վերջինս, նախանձելով, որ մարդիկ իրենց զոհում են սիրելի արքայի համար, նեղացած դիմում է հորը. «Երբ դու գնացիր,
Ու ամբողջ երկիրը քեզ հետ տարար,

Ես այս ավերակների վրա
Ո՞ւմ թագավորեմ՝:

Եվ Արտաշեսը որդուն անիծում է սրա համար՝ ասելով.
«Թե դու հեծնես ու որսի գնաս

Ազատն ի վեր, դեպ Մասիս,
Քաջքերը քեզ բռնեն տանեն

Ազատն ի վեր, դեպ Մասիս.
Այնտեղ մնաս, լույս չտեսնես»:

Խորենացին վկայում է, որ Արտաշես արքայի մահվան ժամանակ լալկան կանայք մազ փետելով և կուրծք ծեծելով ողբում էին արքայի մահը, ստրուկներին սպանում էին և թաղում Արտաշեսի հետ՝ իբր թե հանդերձյալ կյանքում նրան ծառայելու համար: Այստեղ առնչվում ենք

հեթանոսական մի շարք մշակութային-հավատամքային սովորույթների, որոնք մեծ տեղ են զբաղեցրել մեր հեթանոս նախնիների կենցաղում: Այդ մասին են վկայում պեղված բազմաթիվ դամբարանները, որտեղ բացի բազմաթիվ մարդկային ոսկորներից, գտնվել են նաև սպասք, կենդանիների ոսկորներ և այլն:

Խորենացու վկայությամբ ծեր կանայք, որոնցից լսել է այս առասպելը, պատմում են, որ Արտավազդը արգելված մնում է քարանձավի մեջ, երկաթե շղթաներով կապված, երկու շուն կրծում են նրա շղթաները և նա ջանք է անում դուրս գալ, բայց դարբինների կռանահանության ձայնից կապանքները ամրանում են: Զարմանալի նմանություն է նկատվում այս առասպելի և Արա Գեղեցիկի մասին առասպելի մեջ: Երբ Արան սպանվել էր մարտում, նրա մարմինը փորձեցին վերակենդանացնել արալեզները՝ շնակերպ արարածները և չկարողացան: Իսկ Արտավազդի դեպքում նրա կապանքները փորձում են կրծել, քանդել շները, որոնց նույնպես չի հաջողվում: Շատ գրականագետներ անդրադարձել են այս առասպելի միայն դիցաբանական սյուժեին: Աբեղյանը առաջ է քաշում չարքերի՝ որպես Աժդահակի սերունդներ՝ վիշապներ լինելու վարկածը՝ այս առասպելին տալով վիշապամարտի նկարագիր: Որոշ գրականագետներ որոնում են Արտավազդ-Փոքր Մհեր կապը, երբ հերոսները փակվում են ժայռում, իսկ ժողովուրդը սպասում է նրանց գալստյանը՝ որպես փրկության լույսի: Սակայն դրանք բոլորը առասպելի միայն դիցաբանական բնութագիրներն են, որոնք հաճախ նույնացվելով այլ ազգերի համախոս առասպելների հետ, ապազգայնացվում են: Մինչդեռ մեր առասպելում անհրաժեշտ է գտնել այն պատմամշակութային սահմանները, որոնք արտացոլում են տվյալ առասպելի մեջ առկա ազգային մտածելակերպն ու խնդիրները: Այս առասպելի վերաբերյալ ինքնատիպ մեկնաբանություն է արել Գր. Գրիգորյանը, որի կարծիքով Արտաշեսը բոլոր մանր ու մեծ ստրկատերերի գեղարվեստական ընդհանրացումն է, իսկ նրա մահվան կապակցությամբ տեղի ունեցած մասսայական սպանություններն ու ավերածությունները՝ ստրկատերերի մահից հետո նրանց գերեզմանի վրա դարեր շարունակ կատարված ստրուկների բռնի սպանությունների արտահայտությունները, որոնք ներկայացվել են իբրև՝կամավոր՝սպանություններ, - միևնույն ժամանակ գրում է, - «Արտավազդի բողոքն այստեղ, ինչպես սխալ բացատրել են, անձնական ոչ մի երանգ չունի և չի բխում նրա փառասիրական ձգտումներից: Հիշյալ խոսքերով նա բողոքում է երկիրն ավերակների վերածող բռնի

սպանությունների և ստրկատերերի վայրագ կամայականությունների դեմ: Հորն ուղղված բողոքով նա հանդես է գալիս իբրև ժողովրդի պաշտպան»:

Հիմք ընդունելով Գրիգոր Գրիգորյանի պնդումները՝ այս առասպելը կարելի է բնութագրել որպես ազգի ներսում տեղի ունեցող հասարակական հարաբերությունները, դասակարգային պայքարն արտացոլող պատմություն: դրվագները: Այդ ամենն այն բանի ապացույցն են, թե որքան մեծ դեր են ունեցել հավատալիքն ու պաշտամունքը մեր հեթանոս նախնիներին կենցաղում:

Եզրակացություն

Վաղը ազգովին պիտի հնձենք այն, ինչ որ սերմանում ենք այսօր: Գ. Նժդեհ

XVI դարի ֆրանսիացի գրող, փիլիսոփա Միշել Մոնտենը մի առիթով գրել է. «Ժողովո՛ւրդ, ասա՛ ինձ քո իդեալները, ես կասեմ քո ապագան»: Այս ճշմարտությունը գիտակցել և իրենց գաղափարախոսությունների հիմքում են դրել նաև հայ մտածողները՝ Ռաֆֆին, Մուրացանը, Գարեգին Նժդեհը և ուրիշներ: Վերջին ժամանակներս շատերը, խոսելով ազգային գաղափարախոսության ստեղծման մասին, աչքաթող են անում այն փաստը, որ այն մեզանում գոյություն ունի: Խնդիրն այն է, որ այդ գաղափարախոսությունը պետք է համապատասխանեցնել ժամանակի պահանջներին, մատաղ սերնդի մեջ այն տարածել և արմատացնել:

Գարեգին Նժդեհն իր ուսմունքի մեջ նշում էր, որ ազգային մնայուն արժեքներ պետք է լինեն հայրենիքը, լեզուն, նախնյաց ուժի պաշտամունքը: Այդ արժեքները կարող են նպաստել նոր սերնդին ազգային ոգով դաստիրակելու գործին, քանի որ հայրենիքի նկատմամբ սերը յուրաքանչյուր հայի համար պետք է լինի առաջնայինը՝ անկախ նրա սոցիալական և քաղաքական կարգավիճակից: Երիտասարդության հայրենասիրական, ազգային արժեքների պահպանման ու գիտակցության դաստիրակության գործում Նժդեհը մեծապես կարևորում է մայրերի դերը: Նա հայ կնոջ միջոցով է տեսնում հայ ընտանիքի հոգեփոխման ճանապարհը: Այս ամենը խոսում են այն մասին, որ հայրենասեր սերունդ ունենալու համար ազգային գաղափարները պետք է սերմանվեն դեռ վաղ տարիքից: Ընտանիքը այն կարևոր սոցիալական ինստիտուտն է, որտեղ ընթանում է մանկան կրթության, դաստիրակակության, աշխարհայացքի ձևավորման սկզբնական փուլը:

Մեր պատմության հերոսական էջերը, առասպելները, ավանդապատումները, հատկապես երեխաների շրջանում մեծ ոգևորություն են առաջացնում՝ աստվածների, հսկա հերոսների մասին պատմություններով: Հայ առասպելաբան Սարգիս Հարությունյանի «Հայ հին վիպաշխարհ» 2004 թվականին հրատարակված գունազարդ գիրքը հիանալի միջոց է նախադպրոցականներին՝ մեր առասպելներին և վիպերգերին հաղորդակից դարձնելու համար: Ավելի վաղ տարիքի երեխաների կրթության համար նպատակահարմար է առասպելական սյուժեներով «Ներկիր ինքդ» գրքույկներ ստեղծելը և կիրառելը:

Վերը նշված նյութերի ուսուցումը կարելի է կազմակերպել նաև թեմատիկ միավորումների միջոցով: Սա ուսուցման այն ձևն է, երբ այս կամ այն ծավալուն թեման ուսուցանվում է մի քանի առարկաների փոխկապակցությամբ: Օրինակ՝ «Հայկ և Բել» առասպելի ուսուցումը կազմակերպելիս հանձնարարված ժամաքանակը կարելի է բաշխել հետևյալ առարկաների միջև.

Հայ գրականություն - «Հայկ և Բել» առասպելի ուսումնասիրությունը՝ որպես գրական գործի Աշխարհագրություն - Նույն առասպելի աշխարհագրությունը, նրանում հանդիպած աշխարհագրական եզրույթների մասին տեղեկություններ

Հայոց պատմություն - Հայկը և Բելը՝ որպես պատմական անհատներ

Կերպարվեստ - «Հայկ նահապետ» քանդակի վերատպության ցուցադրությունը և առասպելի ինքնուրույն նկարազարդումները

Ուսուցման այս ձևը նպաստում է սովորողների բազմակողմանի գիտելիքների ձեռքբերման համակարգմանը և ազգային արժեհամակարգի ճիշտ ձևավորմանը:

Ներկայումս առաջնային խնդիր է նոր սերնդին ազգային գաղափարախոսությամբ ճիշտ դաստիարակությունը: Այս պարագայում կարևորվում է զանգվածային հաղորդակցման միջոցների՝ մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և սոցիալական համացանցի դերը: Հատկանշական է նաև թատրոնի դերը: «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգության բեմականացումը, որը հաջողություն ունեցավ մայրաքաղաքում, նպատակահարմար է, որ իր հաղթական երթը շարունակի նաև մարզերում և երկրից դուրս՝ որպես հայ ազգային ինքնության դրսևորման հերոսական ձև՝ դառնալով ժողովրդի սեփականությունը: Այսօր, ավելի քան երբևէ շատ կարևոր է ազգային ինքնագիտակցության, ինքնաճանաչողության հիմնախնդիրների ճիշտ և ժամանակին առաջնայինը դարձնելու գործը՝ սեփական ազգը իր նկարագրից և հոգեկերտվածքից չզրկելու համար:

Գրականություն

1. Աբեղյան Մ., Երկեր Գ,ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Ե. 1968
2. Խորենացի Մ., Պատմություն հայոց,՝Հայաստան՝հրատ. Ե. 1968
3. Հարությունյան Ս. Հայ հին վիպաշխարհը, Արևիկ հրատ, Ե. 1987
4. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևանի պետ. համ. հրատ., Ե. 1983:
5. Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն,՝Լույս՝հրատարակչություն, Ե. 1967